



ԳՐԻԳՈՐ ԶՕՅՐԱՊ (1861-1915)

ՌԵՅԱՆ

Ա

Ան ատենն ալ առատ մագերը կը սիրէի ու քովընտի նստած՝ կը դիտէի ձիւնասպիտակ ծոծրակին վրայ ժողվուած սեւ թումբը՝ պարտեզին մէջ տեղ տեղ դրուած կազի լապտերներու լոյսերուն տակ, շքեղ ու անբարբառ ցոլացումով, որուն աչքերս յառած կը մնային:

Ինչէ՛ր չէին ըսեր ինծի այդ մագերը. իրենց անմոռնչ կեցուածքը՝ հո՛ր, այդ բարձունքին վրայ, պարկեշտ ու վրդովիչ բան մը ունէր:

Հեռուէն՝ նայուածքս կը հետեւեր անոնց շնորհալի շրջագիծին, կամակ ելեւէջներուն, ըմբոստ պզտիկ թելերուն, — ըմբոստ՝ որպէս են ամեն պզտիկները, — որոնք սանտրէն փախչելով կը դառնային կ'իյնային վար, զսպանակի գալարումներով:

Քիչ քիչ, մտերմութիւն կը հաստատէի անոնց հետ. կը ճանչնայի զանոնք, գրեթէ կը խօսէի հետերնին:

Ամենէն հաճոյալի անակնկալը եղաւ երբ ինծի դարձաւ իր դէմքը. գեղեցի՞կ. ոչ հարկաւ. բայց տարօրինակ կերպով սրտի մօտ ու համակրելի պատկեր մը, յոգնած ու տրտում նայուածքով, որ ինկած տեղը կանգ առնելու պէս բան մը ունէր կարծես:

Անո՞ր համար երկար ատեն սեւեռած մնաց վրաս. չեմ գիտեր. բայց ինծի այնպէս թուեցաւ, որ այդ նայուածքը մանրամասն հետախուզեց զիս. չափեց, ձեւեց, տեսաւ մանաւանդ զմայլած ու քիչ մը ապշած արտայայտութիւնը աչքերուս: Գոհ երեւցաւ անշուշտ այս քննութենէն, վասն զի ժպիտ մը գծագրուիլը ու աներեւութանալը մէկ եղաւ երեսին սաստիկ կարմրութեանը մէջ, այն վերջալոյսի տարտամ շառաւիղներուն նման որոնք արեւմուտքին մէջ կը հալին՝ համասփիւռ շէկութիւն մը ձգելով հորիզոնին վրայ:

Բ

Որչափ որ կեցանք այնտեղ՝ անխօս մտերմութեան մը կապերով միացած զգացիկ սրտերնիս: Տարեց մարդիկ կային իր շուրջը, հայրը, հօրեղբայրները թերեւս, ու անոնց առջեւ, մանաւանդ այն չարահայեաց բազմութեան մէջ, որ այս Մեծիկրտարի պարտէզը կը լեցնէր հիմա, զգուշաւոր դիրք մը պահելու ստիպուած՝ չէր կրնար ուզածին չափ ստեպ ինծի դառնալ. բայց զինքը տոչորող յայտնի անհամբերութիւնը կը կարդայի երեսին վրայ, ամեն անգամ որ առիթը գտնէր իմ կողմն նայելու:

Պատանութեան անուրջներուն մէջ երագուած, ըղձացուած էակն էր դէմս, խորհրդանշանը իմ բոլոր փափաքներուս, որ հոդ նստած էր, իր անվերլուծելի ձգողութեանը մէջ:

Ազատ էր ան երեսս չնայելու ու չխնդալու ինծի. ի՞նչ փոյթ. նորէն պիտի սիրէի զինքը, պիտի հետեւէի իրեն ու կապուէի իր յիշատակին. իր Կուռքի անտարբերութիւնը՝ մագի չափ չպիտի խախտէր իմ հաւատքս:

Իսկ հիմա ակելի բաղդաւոր էի. կ'զգայի ստոյգ կերպով որ անուշադիր չէր ինծի, ու զիս վրդովող խորհրդածութիւնները՝ իր մտքէն ալ կ'անցնէին:

Երագող ու մտամոլոր կերպարանք մը առած էր անիկա եւ անդադար կը դիտէր ծովը՝ հանդարտ, անծայք սփռոցի մը պէս պարզուած, որուն վրայ լուսինը՝ իր լրումի առատութեանը մէջ՝ աղամանդէ ոստոստուն գոհարներ կը թափէր, մինչդեռ ամառ գիշերին անդորրութեանը մէջ, ծառերը կը կենային մեր շուրջը անշարժ՝ մինչեւ իրենց դողացող սաղարթները: Օդին մէջ՝ ամբողջ անուրջի, վերացումի հրաւեր մը կար կարծես, որուն երկուքս ալ անձնատուր կ'ըլլայինք ժամերով:

Գ

Կէս գիշերին մօտ էր երբոր բազմութիւնը ցրուիլ սկսաւ. լուսինը անհետացեր էր. անոնք ալ ոտքի ելան. գլխու աննշմարելի շարժում մը՝ որ երկուքիս միայն հասկնալի ըլլալուն համար այնքան ակելի քաղցր բարեւ մը ձեւացուց:

Չեռուէն ուղեկից եղայ իրենց, ու ճամբուն վրայ, մութին մէջ տեսայ իր նազելի գլուխը՝ որ ետին կը դառնար մէկը փնտռելու համար կարծես:

Յամր ու դանդաղ քալուածքով մը կ'երթային ու հօրը ձայնը կ'իմանայի մեզ շրջապատող անդորր լռութեան մէջ, խիստ ու հրամայող ձայն մը որ հնազանդութիւն կը պատուիրէր:

Արդեն կը մեղքնայի զինքը. ի՞նչ կը քաշեր արդեօք խստասիրտ հօր մը ճնշումին տակ. մեծ ծառի մը անքոյթ հովանիին ներքեւ փթթած ծաղիկ՝ որ քամիի հարուածներուն դէմ պաշտպանուած է անշուշտ, բայց ուզածին չափ արեւին երեսը չի տեսներ. անդին, ուրիշներ կան, բաց օդին, ձիւնին ու բուքին ձգուածներ, որոնց՝ վտանգները ու վայելքները հաւասարապէս շռայլուած են. ո՞րն է բաղդաւորը ասուցմէ:

Կ'զգամ որ իմս վանդակներու ետին պահուըտող աղջիկ մըն է. իր վեհերոտ ձեւը այս համոզումը կուտայ ինծի: Ռ՛վ է ինքը. ո՞ւր կը բնակի. այս հարցումները այնքան աւելի կը յուզեն միտքս որքան ահա քիչ քիչ կը մօտենան հարկաւ իրենց տունին:

Կանգ առին վերջապէս Ֆրերներու դպրոցին կողմը, նոր շինուած տան մը առջեւ. պզտիկ սպասուհի մը՝ կանթեղ մը բռնած ձեռքը, դուռը բացաւ. ես քայլ մըն ալ առի մօտենալու ու վերջին անգամ մը տեսնելու համար զինքը. հայրը մտաւ նախ, վերջը միւսները, տարիքի կարգով. Էն վերջը մտաւ անիկա ու ես մինակ մնացի տասը քայլ հեռուն, փողոցին մթութեանը մէջ:

Ան ատեն ուզածիս պէս դիտեցի տունը. դէպի Գուշ-Տիլի իջնող զառիվայրին ու հոն վազող վտակին կը նայեր երեսը. գեղջուկ ու սիրուն բան մը ուներ. աջ կողմը՝ անկիւնի սենեակը, Էն աղուորը դիրքով, լոյս մը երեւցաւ յանկարծ ու փողոցէն կրցայ տեսնել զայն, մազերը թափած հիմա, որ բաց պատուհանին առջեւ եկաւ կանգ առնելու վայրկեան մը ու դիտելու Մօտայի ծոցը՝ իր սեղմուած հողէ լանջքերուն մէջ:

Յետոյ լոյսը մարեցաւ ու ամեն բան խաւարի մէջը ինկաւ յանկարծ:

Դ

Ի՞նչ կը խորհիս դուն, ձեռքդ գլխուդ այդպէս, պատուհանիդ առջեւ նստած. թեթեւ քամին մեղմիւ կը շոյէ մազերդ ու ես կը նշմարեմ հոսկէ անոնց վրայ վազող սարսուռը:

Այս իրիկուան դէմդ ելլող տղո՞ւն կը մտածես դուն ալ. սպասուած, օր մը չէ նէ օր մը գտնուած անծանօթին՝ որ հին բարեկամի մը պէս առջի ժամեն մտերիմ կ'երեւայ քեզի, ինչպէս որ ես ահա, փողոցին մէջ պատի մը տակ կեցած, քեզի կը մտածեմ:

Յետոյ, ձանձրացած այս միակերպ անշարժութենէն, փողոցին մէջ կը քալեմ, աչքս վեր այդ պատուհանին սեւեռած. ի՞նչ կ'ակնկալեմ քեզմէ, բառ մը, անուշ խօսք մը, որ շօշափելի ապացոյցը ըլլայ մեզ միացնող համակրութեան:

Մութին մէջ՝ չեմ կրնար որոշել դէմքը, զոր ծնօտին դրուած ձեռքը կը գոցէ, բայց սեւ մազերուն ժողվուածքը կը տեսնեմ յստակ. մունջ կեցած է հոն, չհամարձակելով առջի բառը ինքը արտասանել:

Եւ ես, իրմէ ոչ նուազ վեհերոտ, չեմ խօսիր, վախնալով որ չխռովեմ այս գեղեցիկ երազը ու ձեռքէ չհանեմ զայն:

Հիմա, զովութիւնը կ'աւելնայ. աջ ու ձախ երկարող փողոցներուն մէջ կը լսեմ գիշերապահին ճոկանը որ կը հնչէ ու կ'իմացնէ թէ ժամը եօթն է:

Վերը անշարժ կ'սպասէ ան իր արձանի դիրքին մէջ, ու ես վարէն, զինքը դիտելով միայն երջանիկ եմ ահա: Հորիզոնին վրայ պլպլացող լոյսերը կը տժգունին քիչ քիչ.

գիշերը ավելի յստակ, վճիտ ու թափանցիկ կ'ըլլայ, ու հեռուն՝ ծովին մուկ կապոյտը, իր առջի փայլը կորսնցուցած՝ սեւ ծածկոցի մը պէս կը տարածուի իբրեւ թէ անհուն դագաղի մը վրայ:

Շուրջս տիրող վեհութեան ու խաղաղութեան մէջ ինքզինքս ուրիշ աշխարհի մը փոխադրուած կ'զգամ. մաքուր ու խաղաղ երկիր մը, որ իզմէ ու իրմէ զատ բնակիչ չունի. ամբողջ տիեզերքը մեր երկուքիս ձգուած:

Աքաղաղները կը խօսին. արեւելքէն լոյսի հոսում մը կ'սկսի. գեղեցիկ մազերը վերն են միշտ, պատուհանին առջեւ, իրենց առջի դիրքին մէջ. հովը կը գգուէ զանոնք, անոնց պզտիկ թելերը կը դողացնէ. դէմէն՝ լոյսը կ'աւելնայ, կը զեղու, կը շռայլուի. արշալոյսն է:

Վաստակաբէկ, ժամերով հոս անքուն անցընելուս համար չեմ գանգատիր. դէմս է անիկա, իր պատուհանին առջեւ ինծի պէս անքուն, ինծի պէս երագող:

Քիչ մըն ալ կը կենամ այսպէս. յանկարծ սեւ մազերու կոհակը կը ճշդուի աչքիս առջեւ. ռեհանի պզտիկ թումբ մը, իր մուկ կարմիր թաղարին վրայ կեցած, առտուան գեփիւմէն կը սարսռայ:

Ա՛ն էր բաց պատուհանին առջեւ ինծի սպասողը մինչեւ լոյս. կը զարմանամ. ի՛նչպէս չտեսայ. ծաղրելի կը գտնեմ ինքզինքս. կը բարկանամ պզտիկ իյնալուս համար:

Ե

Յիմա, որ տարիներ անցան անկէ ի վեր, հիմա կ'օրհնեմ քեզի, ո՛վ ռեհանի պզտիկ փունջ, որ ամեն սրտի մօտ բարեկամէ ավելի երջանիկ ըրիր զիս գիշեր մը ողջոյն:

Աղջկան մը դէմք առիւր պատրելու համար զիս. աղէկ ըրիր. այն բոլոր խանդակաթ գորովին համար՝ զոր թափեցի պզտիկ թերթերուդ վրայ, չեմ զղջար:

Առաւօտը թող գայ ուզածին չափ իր հոսած լոյսին անողոք ստուգութիւնը թօթափելու չորս դիս:

Դուն իմ աչքիս՝ առատ գեղեցիկ մազերն ես միշտ անոր:

ՓՕՍՏԱ՛Լ

Ա



Չաճի Տիւրիկը, սպասուհիներու միջնորդը, տասնըհինգ օր աշխատելէն վերջ միայն յաջողեցաւ ձեռք ձգել Կեսարացի Ղազար Էֆէնտիի կնոջ, Սուրբիկ հանրմին, Գատրգիւղի ամենէն հարուստ տիկիներէն մէկուն, ուզած սպասուհին:

Չաճին, Պարտիզակցի մը, ինքն ալ սպասուհի, ստնտու, լուացարար, խոհարար կին եղած էր ատենով, պարագային համեմատ: Ծառայութեան ամեն աստիճաններէն անցեր էր մէկիկ մէկիկ, Պոլսոյ հայ տուններուն, անոնց կարծեցեալ պարկեշտութիւններուն մէջէն հանելով իր հիմակուան անկախ դիրքը:

Այդ տուններուն բոլորին մէջ, Չաճի Տիւրիկ, որ ան ատեն դեռ Երուսաղէմ գացած չլլալուն համար՝ հաճի չէր, իբրեւ ճշմարիտ ու կատարեալ աղախին, աղաներէն մինչեւ

սպասաւորները ճանչցեր էր մօտէն, երբոր մեծ ու պզտիկ, գրեթէ առանց բացառութեան, քիչ շատ գիւնքը սղմեր սղմորտկեր էին հոս հոն, սենեակներուն մէջ, հանրմները տունը չեղած միջոցին, սանդուխին գլուխը, դուռներուն ետին, երբեմն խոհանոցներուն անկիւնները: Ծատ մը տուններու մէջ իր տիրուհիներուն նախանձը շարժելու չափ ընդունելութիւն գտած էր առանց գանգատելու:

Ծատ բան տեսած էր իր անձին վրայ եւ անւի շատ իրեն շուրջը, իր բարակի հետաքրքիր քիթովը հոտուրտալով ամեն ապականութիւնները եւ սուր ականջովը՝ դուռներուն ետեւէն ունկնդրելով կամացուկ մը ըսուած խօսքերուն:

Եփուն կնիկ մըն էր արդէն, երբոր առած պախշիշներէն եւ ամսականէն անելցուցած ստակովը Երուսաղէմ գնաց, ով գիտէ ուխտի՞ թէ մեղքերուն թողութիւն ուզելու համար: Վերադարձին՝ Չաճի Տիւրիկ, սպասաւորութիւնը թողուց, ինք իր գլխուն գործի սկսաւ, ծանօթ տուններու համար կին ծառաներ գտնելու ձեռք զարկաւ, թելլալ կնիկ եղաւ: Իսկոյն յաջողեցաւ այս գործին մէջ. պատրաստաբան ու զուարճախօս կին էր. Էֆէնտիներուն՝ վրան բաց կատակներ կ'ըներ. հանրմներուն՝ օրուան գայթակղութիւնները կը բերէր: Ամենքը գոհ էին իրմէ. ամեն բանի յարմար սպասուհին ինքը միայն ճարել գիտէր: Իր տեղաւորած ծառաները տարիներով կը կենային գտնուած տեղերին: Մենձ տունները, հարուստի տունները, իրեն կը դիմէին. անոնք որ իր յաճախորդներն էին իր անունովը կը պարծենային:

— Մեր թելլալը Չաճի Տիւրիկն է:

— Մերն ալ:

Հաճին՝ Շքիկըլին կամ Պիւռնիկին պէս բան մը կ'ըլլար հայ հանրամտերուն համար:

Ասոր համար էր անշուշտ որ Սուրբիկ հանրմ իրեն լուր դրկեց երբոր իր տանը մէջ, հին օրուան Մարիամին քով, նոր սպասուհի մը անեցնելու որոշում տուաւ ու անոր ճշդեց այն յատկութիւնները որ նոր գալիք աղախինէն կը պահանջուէին:

— Ըռնտիկ մէկը ըլլալու է ամեն բանէ առաջ. հո՛գ չէ թէ որ սկիզբը ձեռքէն գործ չգայ. հոս շուտով խզմէթը կը սորվի. արդէն մեծ բան մըն ալ չունի ընելիք. տղուս Օննիկին սենեակը պիտի շտկէ, զգեստները մաքրէ. սա ալ ըսեմ որ աղջիկ զաւակ չեմ ուզեր տանս մէջ:

Եւ վախնալով որ գալիք սպասուհին Օննիկին սենեակը շտկելու, զգեստները մաքրելու սահմանելովը՝ պէտք եղածէն անելի բացայայտ կերպով իր դիտաւորութիւնը հասկցուցած կ'ըլլայ, իսկոյն անեցուց.

— Աչքը երեսը բաց մէկը չեմ ուզեր հա՛, հաճի՛. դուն իմ ուզածս հասկցար, թէ որ զիս գոհ ընես, ուզած թելալէքդ եւելօքը կուտամ:

— Հասկցայ, օղով:

Միջնորդը քիչէն շատ հասկցող կին էր. անմիջապէս չորս դին ինկաւ, հարցուց փնտռեց, բայց գտնուածները Սուրբիկ հանրմին ուզած պայմանները լիովին չէին միացներ իրենց վրայ: Գեղեցիկ աղախիններ չէին պակսեր իր ձեռքին տակ, բայց ասոնց աչքերն ալ, երեսն ալ պէտք եղածէն անելի բացուած էին ու Սուրբիկ հանրմին ծեր էրիկը՝ Ղազար աղան գլխէ հանելու չափ սատանայ էին: Հանրմին ուզածը միամիտ աղջիկ մըն էր եւ ասիկա Պոլսոյ մէջ դիւրին չեղաւ գտնել:

Այն ատեն Հաճի Տիւրիկ յատուկ ճամբորդութիւն ըրաւ. Իզմիտ, Պաղչեճիկ, Արսլանապէկ, Ատաբազար: Վերջապէս պտըտեցաւ բոլոր այն գեղ տեղուանքը որոնք սպասուհիներու արտածումը կ'ընեն. եւ ահա մեծ յոգնութիւններէ վերջը, չորեքշաբթի օր մը ցորեկին, յաղթական մուտքով մը, Սուրբիկ հանրմին ներկայացուց իր գեղէն բերած սպասուհին, հագիւ տասներուքը տարեկան կին մը, զոր նոյն օրն իսկ միասին առեր բերեր էր Պաղչեճիկէն:

Սուրբիկ հանրմ գլխէն մինչեւ ոտքը գնեց նորեկը որ դրան մօտ բարեւ բռնած կեցած էր. իր հագած պասմայէ տծել շրջազգեստին հակառակ՝ իրօք խիստ շնորհալի գտաւ զայն, քանի որ շուտով ամսականին վրայ յարմարեցաւ միջնորդին հետ. եօթը մեճիտ ամիսը եւ տարին երկու ձեռք նոր լաթ, բացի իր մէկդի նետածներէն զորս իր յօժարութեան համեմատ պիտի նուիրէր, եթէ գոհ մնար անոր խզմէթէն: Եւ անմիջապէս սկսելու համար կոկիկ ու մաքուր շրջազգեստ մը հագցուց անոր, ճերմակ գոգնոց մը կապեց, գլխէն եագման հանեց եւ մազերը շտկել տուաւ. այս համառօտ արդուզարդով աղախինը իր գեղեցկութեան բոլոր շքեղութեանը մէջ երեւաց: Մէջքը բարակ չէր, բայց հասակին բարձրութեանը եւ բարձրուն հարստութեանը վայլած էր: Ձուածել, եւ իր գեղացի ըլլալուն հակառակ դեռ ճերմկոտիկ դեմքին վրայ սեւ խոշոր աչքերը սովորաբար թարթիչներուն շուքին մէջ կը պահուէին ու երբեմն միայն ընթուկներուն աղեղին տակ կը խրոխտային: Բերանը՝ իր գմայլելի գիծերովը ու երկու դիի անկիւնէն իբրեւ թէ յատկապէս վեր առնուած, անդիմադրելի պչրանք մըն էր ինքնին, եւ մոռցնել կուտար պոկունքին անարիւնութիւնը:

Ոչ ոք կիներուն չափ գեղեցկութեան ճաշակը ու հասկացողութիւնը ունի. գեղեցկութիւնը այն միակ ճշմարտութիւնն է զոր կինը չի կրնար ուրանալ, նոյն իսկ

երբ իր թշնամիին վրայ կը գտնուի. շատ հեղ լսած եմ արամբի կնոջ մը վրայ պատմուած չարախօսութիւններու, բամբասանքին, իրաւ կամ սուտ ամեն կերպ աղտոտութեանց ամենէն տաք վայրկեանին՝ սա յայտնութիւնը որուն խորին անկեղծութիւնը կը զարմացնէ զքեզ եւ պատմողին արդարասէր մէկը ըլլալուն համոզում գոյացնել կուտայ.

— Ասոնք բոլորը իրաւ են, բայց շուն կնիկը աղուոր է:

Սուրբիկ հանրմ հանեցաւ ուրեմն իր սպասուհիին, ապրսպըրեց որ վրան գլուխը մաքուր պահէ, աշխատութիւնը սահմանեց, վարքի բարքի խրատներ տուաւ:

Յետոյ, իմանալով որ հօրմէ մօրմէ որբ ու նոր ամուսնացած էր Տիգրանուհին, Սուրբիկ հանրմ որ Յիւանդանոցի ինամակալուհի էր ու իր ամուսնին պէս սրբասէր ու աստուածավախ կնոջ համբաւը կը վայելէր, իր սովորական մեծախօսութիւններէն քիչ մը ջարդեց.

— Ես ծառաներս զաւկի պէս կը նայիմ. ուրիշ տուններու մէջ անոնց հորի ջուր կը խմցնեն, դուն աղէկը գիտես, հաճի՛, ես աղբիւրի ջուր կուտամ անոնց. խոհանոցին մէջ երբոր կերակուրները չօգտեն ձեզի, ինծի անպատճառ իմաց տուր. խոհարարը ծառաները զրկելու կ'ելլայ, ատանկ բան չեմ սիրեր ես. սա ալ ըսեմ որ կերակուրդ ուտելուդ պէս խոհանոցին մէջ կենալու չես. Երիկմարդ ծառաներուն հետ պետք չէ որ խօսքի բռնուիս. հասկցա՛ր աղջիկս. հիմա գնա՛, թող Մարիամը գործդ ցուցնէ քեզի:

Մեղր ու կաթ կը վազէր բերնէն. Տիգրանուհին կատարեալ երանութեան մէջ զգաց ինքզինքը:

Բ

Հետեւեալ ամտուն կանուխ Տիգրանուհին արթնցաւ: Պատուհանէն եկող արեւը ճիշդ իր անկողնին վրայ կ'իյնար, կը սփռուէր, իր հոլանի պարանոցին ու թելերուն սպիտակութեան վրայ կը ճառագայթէր, բոլոր սենեակին մէջ ուրախութիւն մը կը բերէր: Երկու օրէ ի վեր իր կեանքին մէջ պատահած փոփոխութիւններուն տակ ընդարմացած կը մնար. անկողնին մէջ նստած, մտքովը ատոնց քաղուածքը կ'ըներ:

Գեղը, մօրաքրոջ մը տանը մէջ ապրած էր ինքզինքը գիտնալէն ի վեր մինչեւ ամուսնացած օրը: Մօրը յիշատակը իր պզտիկ տարիքին մէջ շատ տարտամ կերպով մը կուգար մըտքին առջեւ, ատեն անցնելով գոյնը նետած, գիծերը եղծուած հին լուսանկարի մը պէս: Հայրը բնաւ ճանչցած չէր: Այս մօրաքրոջ տանը մէջ՝ կէս մը աղախինի ու կէս մը ազգականի պէս կ'ապրէր, տատելով, ինչպէս կ'ըսէր ինքը, իր ապրուստին բեռը զգալի չդարձնելու նպատակով: Ու երջանիկ պիտի ըլլար հող ապրելուն, եթէ մօրաքրոջը երկու աղջիկները անտանելի չդարձնէին իր կեանքը: Ի՞րն էր յանցանքը՝ եթէ անոնցմէ աղուոր էր ինքը: Ապաքէն, այս աղուորութիւնը իր թշնամին եղած էր եւ անկեղծութեամբ Տիգրանուհին կը զղջար իր գեղեցկութեանը համար:

Գեղին մէջ շատ մը տղաք իր ետեւէն ինկած էին գիշեր ցորեկ, հասակին շքեղութեանը, մինչեւ կռնակը հասնող խարտեաշ մագերուն գովեստը փսփսալով ականջն ի վար: Ասոնց եւ ոչ մէկուն հաւտացած էր, բայց այս հետապնդումները՝ հանդարտ ջուրի մը մէջ նետուած մանր քարերու պէս, իր հանգիստը վրդովէր էին: Մօրաքրոջը աղջիկները իր վրայ ամեն տեսակ չարախօսութիւններ տարածելու մէջ

առաջիններեն էին: Ահա այդ միջոցին էր որ երիտասարդ բանուոր մը, իր օրական ապրուստը ճարելու հազիւ հազ կարող մէկը, զինքը ամուսնութեան ուզելու ելեր էր: Տիգրանուհին տասնըութը տարու էր հիմա, ինչ որ գեղ տեղերու մէջ աղջիկներուն համար շատ առաջ գացած տարիք մըն է. յետոյ, իր մօրաքրոջ տունէն ելլելու ստուգութիւնը կար. մօրաքոյրն ալ, զինքը ճամբելու փափաքին մէջ, սիրով ընդունել էր այս առաջարկութիւնը: Եւ օրին մէկը հարս գացած էր տան մը մէջ, ուր փեսէն զատ անոր ծնողքը կային: Մեծ բան մը չհասկցաւ այս ամուսնութենէն. կարգուելէն ութ օր վերջը էրիկը լեռ գնաց իր գործին, ածուխ շինելու, ու ամիս մը վերջը օր մը միայն դարձաւ կնոջը քով, հետեւեալ օրը նորէն իր լեռը երթալու, աներեւութեանալու համար: Հարսը հոս ալ կ'աշխատէր օրն ի բուն ու իր կեանքը, բեւեռային օրերուն պէս, երկարատեւ խաւարի մը կը նմանէր զոր ոչ մէկ լոյսի ճառագայթ կուգայ վայրկեան մը գէթ լուսաւորել, ուրախացնել:

Յանկարծ օրին մէկն ալ իր էրիկը տուն բերին ոտքը կոտրած, ամիսներով անգործութեան դատապարտուած. ասիկա լրումը եղաւ: Ա'հ, թէ որ գոնէ զաւակ մը բերած ըլլար, հիմա ստնտուութեան կ'երթար Պոլիս, ստակ կը վաստկէր ու տուն մը կրնար գնել, բայց այդ ալ չկար ու ասիկա՝ իր կեսուրը ու կեսրայրը յանցանքի մը պէս կը զարնէին իր երեսին:

Հաճի Տիւրիկ ճիշդ այդ ժամուն հասաւ զինքը միասին Պոլիս տանելու համար: Էրիկն ալ, մօրաքոյրն ալ որ մօր տեղ կ'անցներ, յօժարեր էին ասոր. Տիգրանուհին ազատագրութեան պէս բան մը կը տեսներ հոգ: Թէլլալը՝ անոր ապագայ հանրմին փառաբանութիւնը բերնէն չէր ձգեր: Հարուստ մարդիկ, վերկիլի հանրմ. Կաղանդին, Ծնունդին, Չատկին պախշիշ, կերուխումը առատ, աշխատութիւնը թեթեւ. սպասուհիի մը համար ասկէ աւելի ցանկալի տեղ չէր կրնար ըլլալ:

— Աղջի՛, օղրւլ, չգտնուած տուն է, — կ'ըսէր Հաճի Տիւրիկ:

Այնքան որ մօրաքոյրը պահ մը կը մտածէր իր աղջիկներէն մէկը դրկել Տիգրանուհիին տեղը: Վերջապէս որոշումը տուեր էին եւ հետեւեալ առտուն, դեռ չլուսցած, գիշերուան մութուն մէջ կառքը երկու կիները Պաղչէճիկէն իջեցուցեր, ծովեզերքը բերեր ձգեր էր, ճիշդ երբ արշալոյսը կը ծագէր:

Տիգրանուհին հիմա այս մութէն դէպի լոյս ուղեւորութիւնը, ժամանումը միտքը կը բերէր, բարի գուշակ մը կը համարէր իր կեանքին համար: Իսկոյն գմայլեր էր Իզմիտի ծովածոցին վրայ, որ այգուն սրսկած դեղին ոսկիի ցլացումին մէջ, անշարժ կը տարածուէր, կանուխ արթննալ չուզող աղուոր ու ծոյլ կնկան մը պէս: Մինչեւ այդ տարիքը մօտանց չէր տեսեր ծովը ու այս պահուս, դեղին եռաթի խոշոր նաւակի մէջ տեղաւորուած, իր պզտիկ պօղչան քովիկը, այդ կապոյտ տարածութեան վրայ սահելուն կ'զբօսնուր ու անոր վրայ պատմուած ահաւոր պատմութիւններուն չէր հաւտար: Իզմիտ հասնելուն՝ հազիւ ատեն ունեցեր էին շոգեկառքը մտնել եւ իսկոյն կայարանին աղմուկէն ու թոհ ու բոհէն զատուելով խօլ արշաւ մը սկսեր էր. անդուլ, անդադար ժամերով վագք մը, քերելով ծովեզերքը ձախէն, ու աջէն՝ սուրալով մութ մանիշակագոյն հողերու մէջէն որ մինչեւ Հերեքէ այդ տեղի ցամաքը կը կազմեն: Հոս հոն, տեղ տեղ, կը կենային ու Տիգրանուհին կը կարծէր որ յոգնութիւն առնելու համար էր ասիկա. ոմանք կը ձգէին շոգեկառքը, ոմանք նոր կը մտնէին, եւ անմիջապէս ճամբայ կ'իյնային. յիմարական խոյացումը կ'սկսէր դէպի Պոլիս: Ու կը յիշէր վերջապէս հասնելին Հայտար Փաշա, Պոլիսը, Բերան զորս Հաճի Տիւրիկ մատովը իրեն ցուցուց հեռուէն եւ ասդին՝ Գատըզիւղ՝ իրենց գալիք տեղը, մաքուր փողոցներով, գեղեցիկ տուններով շինուած քաղաքը որուն վրայ հիացաւ: Կայարանին մէջ կը վախնար որ բազմութեան մէջ չկորսուի. թելին տակի պզտիկ պօղչան ոյժով մը կը սեղմէր, իր շփոթութեանը մէջ մոռնալու

վախով: Հաճի Տիւրիկը քովս էր սակայն, ճարպիկ ու վարպետ առաջնորդ, որ ամեն դժուարութեանց մէջ կը քաշէր կը հանէր զինքը, մինչեւ որ հո՛ւս, այս հարուստ տանը մէջ բերաւ ու յանձնեց զինքը: Հաճի Տիւրիկ, պահապան ու զօրաւոր հրեշտակի մը մարմնացումն էր իր աչքին, ու Տիգրանուհին սրտին խորէն շնորհակալ կ'ըլլար անոր այս վայրկեանիս:

Եւ այս տունը՝ իր հարուստի բարբառող կահաւորումին մէջ. երեք ծառայ որոնք իրենց աշխատութեան մեքենական ճշդութեամբը զարմացուցեր էին զինքը. ծեր Մարիամը, որ ինչ ընելիքը պիտի սորվեցներ հոս տեղ. եւ մանաւանդ անուշ լեզու հանրմ մը: Միայն իրիկունը աղային լուրջ ու խոժոռ դէմքէն վախցաւ քիչ մը. յետոյ անոր տղան, երիտասարդ մը, մարմնեղ, արիւնտտ անձ մը. հօրը ձեւը, հօրը լոջութիւնը:

Այս ամենը կարգով ամփոփեց շարեց մտքին մէջ ու խորունկ գոհունակութիւն մը զգաց. յետոյ ցատքեց տեղէն շուտով, հագուեցաւ, մազերը սանտրեց, պատէն կախուած հայելիի մեծկակ կտորի մը մէջ նայեցաւ. այն ատեն, առջի անգամ ըլլալով ուշադրութեամբ դիտեց իր դէմքը, աղուոր ըլլալուն հաճոյքը զգաց ու վար իջաւ:

Գ

Սուրբիկ հանրմին աղուոր պէսլեմէն ամենուն բերանն էր գեղին մէջ: Աղաներն ալ, հանրմներն ալ Սուրբիկ հանրմը կը շնորհաւորէին:

Պզտիկ ու անգիտակից պչրանքով կը հագուէր անիկա, իր հանրմին պատուերին համեմատ, ճերմակ մաքուր գոգնոց կապած առջին: Իրիկունները, աշխատութիւնները լմնալէն ետքը, ամենէն վերի յարկը իր փոքրիկ սենեակը կ'երթար, պատուհանին առջեւ կը նստէր, շոգենաւէն ելլողները դիտելու համար, մինչեւ որ վարէն կանչէին զինքը:

Տանը մէջ կ'սկսէր վարժուիլ. իր առած ամսականը ամբողջութեամբը գեղ կը դրկէր, երկանը ձեռքը, ու գոհ էր այս կեանքէն: Միայն երբեմն խուլ անհանգստութիւնը ուներ վտանգի մը գոր չէր տեսներ, ճիշդ ինչպէս սենեակի մը մէջ ինքնիրենը նստած մէկը, նոյն իսկ աչքը գոց պահուն, կ'զգայ ուրիշի մը ներկայութիւնը, աչքը դեռ չբացած:

Այս վտանգը ակելի օդին մէջն էր քան թէ շօշափելի բան մը: Չէր գիտեր հաստատ կերպով թէ ի՞նչ էր իրեն սպառնացող բանը, բայց զգոյշ կենալու պետքը կ'զգար:

Այս Պոլսոյ մարդիկը, իրենց բոլոր քաղաքավար վարմունքին հակառակ, կնկան նայելու ձեւեր մը ունէին, որ համբուրելու պէս կը դաչէր իր երեսին եւ իր նոր հարսի, գրեթէ կոյսի ամչկոտութիւնը կը վիրաւորէր ամեն վայրկեան: Միմիայն իր կնոջական բնագոյովը կ'զգար լուռ իղձերու հովը որ իր շուրջը կ'ելլէր, կը բարձրանար, երբոր երիկմարդոց առջեւ գտնուէր, անուշ բերած կամ ջուր տուած միջոցին: Եւ, դէպի դուռ դարձած՝ սենեակէն դուրս ելլելուն, ամեն աչքերը իր վրայ էին, իր յաղթ ու գեղեցկաշէն մարմնին վրայ որուն լեցուն գիծերը, իր քալուածքին համեմատ հագիւ թէ նշմարելի շարժումով մը կը խաղային: Մինչեւ անգամ իր հագուստը ու կապուստը, շինականի եւ սպասուհիի պարզութեամբ, եւ թերեւս ատոր համար, հրապուրիչ բան մը ունէր:

Այս ձգողութեան՝ Ղազար աղային տղան չդիմացաւ երկար ատեն:

Մարմնեղ ու տարփասեր երիտասարդ մըն էր, հօրը պէս իր բոլոր իղձերը թաքուն պահելու սորված ու, ատոր համար, ա՛լ աւելի ինքզինքը զսպելու անկարող, երբոր դիպուածով մինակ մնար սպասուհիին հետ:

Իր ծանր գլուխ տղու համբաւին հակառակ, շուտով սկսաւ կատակներ ընել Տիգրանուհիին հետ, փորձի եկթարկելով զայն, ջանալով հասկնալ դիմացինին ընդդիմութեան ոյժը: Երբեմն, իբրեւ թէ անզգուշութեամբ, անոր մարմնին կը դպէր, ձեռքը բռնել կ'ուզէր: Այն ատեն Տիգրանուհին հասկցաւ անոր միտքը ու ետ քաշուեցաւ առանց խուճապի, այն վախկոտներուն պէս որոնք ծանր ծանր քալելով կը նահանջեն, շինծու քաջութեամբ եւ անփութութեամբ մը ծածկելով իրենց ներսիդիի դողը, դիմացինին յարձակումը չփութացնելու նպատակով:

Անկէ վերջը երիտասարդը բացէ ի բաց իր պահանջումները պարզեց անոր, այնքան աւելի բռնանալով, որքան վեց ամիսէ ի վեր տեւող մերժումները զինքը ամեն ծայրայեղութեանց տանելու աստիճանին հասցուցեր էին: Առտու, իրիկուն, գիշեր, աչք կապուկի կամ պահուղտուքի պէս բան մըն էր տանը մէջ, սենեակէ սենեակ, անկիւնէ անկիւն հալածանք մը, որուն մէջ աղախինը, պարտաւորուած անոր մօտ գալու ամեն անգամ որ խըզմէթ մը ապսպրէր իրեն, ինչ ընելիքը չէր գիտեր:

Վերջապէս, յուսահատած, օրին մէկը հանըմին գնաց ամեն բան խոստովանելու: Սուրբ ու առաքինի կին էր իր հանըմը, որուն գովեստը կ'ըներ քարոզիչ Սրբազանը շատ անգամ Եկեղեցւոյ բեմէն: Ու իրեն պաշտպան մը գտնելու առաջադրութեամբ, ցորեկ մը իր հանըմին հետ մինակ մնացած մէկ ատենին, վարանելով կարմրելով ամեն բան հասկցուց անոր:

Սուրբիկ հանըմ զարմացաւ, չհաւտաց նախ ասանկ բանի մը գոյութեանը, թերեւս Տիգրանուհին սխալած էր: Յետոյ ըսաւ որ իրիկունը իր տղուն հետ պիտի խօսէր, բայց աւելցուց ժպտելով որ այս բոլոր պատահածին յանցանքը Տիգրանուհիին գեղեցկութեանն էր:

— Աղէկ սիրտ ունի տղաս, բայց Երիկմարդ Է, դուն ալ այնքան աղուոր ես որ չեմ զարմանար զքեզ սիրելուն: Մարդ քեզի չի կրնար դիմանալ:

Հաճի Տիգրիկ որուն Տիգրանուհին յայտնած էր իր վիճակը, խնդաց իր վրան:

— Օղո՛ւ, ըսաւ անոր, Էֆէնտիիդ տղան կը սիրէ կոր քեզի, ա՛լ ի՞նչ կ'ուզես:

Տիգրանուհին քիչ մը ատեն ալ շարունակեց պաշտպանել ինքզինքը անոր ձեռնարկութիւններուն դէմ, բայց կամաց կամաց վարժուեցաւ սիրոյ խօսքեր լսելու անկէ: Հանըմը այդ միջոցին շատ շատ պարզեւ կուտար իրեն. ամսականին մօտ գումար մըն ալ ասանկով կ'առնէր: Տիգրանուհին կը խոստովանէր ինքնիրենը որ ասիկա մի միայն իր աշխատութեանը համար չէր: Յետոյ, բոլոր այս հետապնդումներուն, հալածանքներուն մէջ իր արիւնն ալ կ'եռար, դող կ'ելլէր ու կ'սկսէր ինքն ալ փոխադարձ հաճոյք մը զգալ այդ ամենէն: Փախչիլ կը ձեւացներ, բայց կը ձեւացներ միայն ու կը ժպտէր:

Գիշեր մը Տիգրանուհին իր սենեակին մէջ գտաւ իր երիտասարդ Էֆէնտին, պոռալ ուզեց, բայց վախցաւ ձայն հանելու, աղաչեց.

— Ոտքդ պագնեմ Էֆէնտիս, մեղք եմ:

Բայց Էֆէնտին կորովի էր եւ իր ոյժին տակ զսպեց զինքը:

— Յանըմս, հանըմս ի՞նչ պիտի ըսէ, կ'ըսեր անիկա դողդողալով:

— Խե՛նթ, պատասխանեց երիտասարդը անոր, մայրս ինձի ըսաւ որ սենեակդ ես ու եկայ քեզ գտայ. մօրմէս բնաւ մի՛ վախնար:

Ետ ետ երթալով կինը պատին կռթնած էր ալ զինքը գրկող պողպատե բազուկներուն մէջ անշարժ մնացած. հոս՝ դիմադրութեան ոյժը կը պակսէր. գլուխը պատին դարձուցած ըլլալով, իր պարանոցին վրայ կ'զգար համբոյրներու կիզումը, ու Տիգրանուհին, անձնատուր ըլլալու մօտ ու անձնատուր ըլլալէ առաջ, իր արդարացումը կը փնտռէր հիմա, մտածելով որ ձեռքէն եկածը ըրեր էր ինքզինքը պաշտպանելու համար. ու յանցանքը իրը չէր՝ եթէ չէր յաջողեր: Անձնասպաններ կան որոնք վերջին պահուն զոջալով հանդերձ, չեն կրնար իրենց որոշումէն ետ կենալ եւ տող մը գիրով իրենց մահը կը բացատրեն, կ'արդարացնեն. Տիգրանուհին ըրածն ալ ատ էր:

Դ

Երկու տարի տեւեց այս կեանքը. ուզուած աղախինն էր անիկա որ Էֆէնտին տղան Բերա, զէջ տեղուանք երթալէն վազ բերած էր: Սուրբիկ հանըմ հարսի մը պէս հիմա կը հագուեցներ զայն, ու եկողին գացողին անոր գովեստը ընելէ չէր դադար:

Օրին մէկը, սակայն, Տիգրանուհին հիւանդացաւ. գլուխը կը դառնար, սիրտը կը խառնուէր. այս անհանգստութիւնը շարունակեց քանի մը օր, բայց սպասուհին վախէն բան մը չըսաւ, բերանը չբացաւ մէկու մը. քիչ մը ատեն անցաւ ու ծոցուորութեան նշանները երթալով շեշտուեցան: Տիգրանուհին շուարած էր, ինչ ըսելիքը ինչ ընելիքը չէր գիտեր: Միւս ծառաները կ'սկսէին քիթերնուն տակէն ինդալ, կատակներ ընել, չարչարել զինքը: Այդ միջոցին երիտասարդ Էֆէնտին իր մօտը չէր գար, ու տանը մէջ երեսը չէր նայեր: Յանկարծ օր մըն ալ Սուրբիկ հանըմ զինքը ուշադրութեամբ դիտեց, նայուածքով մը որ կրակէ պատմութեան մը պէս սպասուհին գլխէն մինչեւ ոտքը շրջապատեց:

— Մօ՛տ եկու, Տիգրանուհի, ըսաւ անոր բիրտ ձայնով մը:

Եւ տեսելով անոր վարանիլը.

— Սա՛նկ, աւելի՛ մօտ:

Մօտէն՝ յղութիւնը ակներեւ էր. շատ մը կիներու պէս Տիգրանուհին տգեղցեր էր. երեսին մորթը թուլցեր, կախուէր էր, փորը անշտորի կերպով դուրս կը ցցուէր ու ամեն սիրտը զարնելուն՝ չափազանց մեծցած կուրծքին յարոյցքը աչքի կը զարներ իսկոյն:

Այն ատեն բարկութենէն Սուրբիկ հանըմին խելքը գլխէն գնաց:

— Փօստա՛լ, պոռաց անոր երեսն ի վեր, փօստա՛լ, տունս անպատուեցիր, թե՛զ ճեղնէնէմ եղի՛ր:

Մարիամ վեր վազեց հանըմին ձայնը լսելով:

— Յաճի Տիւրիկը կանչեցէք շուտ, սա շուտը առնէ տանի՛, կը պոռար հանըմը:

Երկու ժամ ետքը թելլալը գտան բերին ու բերանը փրփրելով Սուրբիկ հանըմ իր գայրոյթը դուրս թափեց:

Կեղծաւորութիւնը անանկ բան մըն էր որ երբեմն ու վերջ ի վերջոյ անկեղծութեան հետ կը շփոթուի եւ անկէ չի տարբերիր, ինչպէս որ սուտ խօսողներ կան որոնք իրենց սուտին կը հաւտան:

Ասանկ ալ Սուրբիկ հանըմին բարկութիւնը շինծու բան մը չէր, անկեղծ էր. երբեք կարող չէր հիմա մտքէն անցընել որ իր գիտութեամբը, իր կամքովը, իր կարգադրութիւնովը ամեն բան եղած կատարուած էր: Իր բերնին մէջ ամեն վայրկեան յեղեղուող պատիւ, պարկեշտութիւն բառերուն վարժութեամբը՝ ցաւագարի մը պէս կը պոռար, աղախինը, Յաճի Տիւրիկը ու բոլոր աշխարհը յանցաւոր գտնելու կ'ելլէր:

— Յիմա՛, հիմա՛, փօստալը թող կորսուի երթայ, վայրկեան մը չեմ ուզեր տունիս մէջ:

Այս եղաւ իր վերջին խօսքը:

Թելլալը Տիգրանուհիին սենեակը ելաւ, մահուան դողերու մէջ գտաւ զայն. սաստիկ ջերմ եկած էր վրան, երեսները կարմրեր էին, միւսչոյճ ակռաները իրարու կը զարնուէին:

Միջնորդ կինը գթաց անոր. բան մը հարցնելու պէտք չունէր. անցած դարձածը գիտէր. միայն հարցում մը.

— Բանի՞ ամսու ես, ա՛ղջի:

— Չեմ գիտեր, միմնջեց միւսը:

Վար իջաւ հանըմին քով, բայց անիկա նորէն սկսեր էր ձայնը բարձրացնել ու ջանքեր կ'ընէր իր գայրոյթը աւելցնելու համար. շարունակ կը յիշէր ասանկ աղքատ կին մը իբր սպասուհի իր տունը ընդունելով գործած բարիքը եւ ասոր փոխարէն, գտած ապերախտութիւնը. աս ազգը ասանկ էր միշտ. աղքատները ասանկ խայտառակ արարածներ էին բոլորն ալ. ու նստած տեղէն բէշը վեր կը քաշէր իբրեւ թէ այս տիղմին չքսուելու համար: Եւ յանկերգի մը նման, միեւնոյն նախատական բառը կուգար շուրթերուն վրայ, թուքի մը պէս.

— Փօստա՛լը, փօստա՛լը, ով գիտէ ո՛ր ծառաս գլխէ հաներ է:

Այն ատեն Յաճին նեղացաւ ա՛լ. ձեռքերը մէջքին դրաւ ամբարտաւան ձեւով մը.

— Ինծի նայէ՛, հանըմ, շտտակն ըսե՛մ, անիկա խեղճ կնիկ ծառայ մըն է, դուն քու տղուդ խօսք հասկցնելու էիր. հիմա ալ ելէ՛ր ծառայի հետ տեսնուեր է կ'ըսես. ասիկա մեղք է:

— Ի՛նչ, հիմա ալ տղո՞ւս վրայ մուր պիտի քսէք. իմ տղաս ծառայի վրայ չի թուքներ. բոլոր գեղին աղջիկները, կնիկները իրն են:

— Զու բոլոր գեղիդ մեջ ալ Տիգրանուհիին պէս աղուոր մը չկայ, հանրմ. դուն եկո՛ւր իմ խօսքս մտիկ ըրէ, իմ գլխէս շատ տաք ու պաղ անցած է. բան մըն է որ եղեր է. ասիկա առնել անցնելու չէ:

Բայց միւսը կը յամառէր. չէր ընդունէր որ իր գաւակը տեսնուած ըլլայ Տիգրանուհիին հետ:

Ու վեճը երկարեցաւ. երկուստեք բիրտ բառերով, նախատինքներով լեցուած վեճ, որուն մեջ ստորին ու աղտոտ դերը՝ թելլալ կնկանը դերը չէր:

Սուրբիկ հանրմ ուրիշ բանի չէր բաղձար բայց միայն գայթակղութիւնը ակելի չտարածուած մէյ մը դուրս նետել Տիգրանուհիին:

Չաճին խորամանկ էր, զգաց ասիկա եւ ջանաց օգուտ քաղել անկէ, սպասուհիին համար քանի մը դրուշ ձեռք ձգելով.

— Ամեն բան ստակով կ'ըլլայ:

— Անոր տալու Յիւանդանցին կուտամ, կ'ըսէր Սուրբիկ հանրմ, կրկնելով այն խօսքը զոր իրենց պարտքը վճարել չուզողները, յայտնի աւագակ մը չհամարուելու համար, սովորաբար կը գործածեն մեր մէջ:

Ան ատեն Չաճին բերանը բացաւ:

— Ինծի նայէ, ձեր տղաքներուն էյլենճէին համար տունը աղուոր պէսլեմէ ուզողը փարա տալէն քաշուելու չէ, հասկցա՞ր օղու: Յիւանդանցիդ ստակ տալուդ, տղուդ ծոցուդ ձգած աղքատ աղջիկին տուր. չունիկ չունեւորիկ չէք, փառք Աստուծոյ: Աս աղջիկը տեղ մը չի կրնար աշխատիլ, գաւակ պիտի բերէ, ապրուստ չունի, գեղը հիւանդ երկանը դրկելու ստակ չունի:

Սուրբիկ հանրմ պոռաց, հայիոյեց, սակարկեց, եւ վերջ ի վերջոյ քսան ոսկի տուաւ, բայց այն պայմանով որ նոյն վայրկեանին Չաճին առնէ տանի Տիգրանուհիին: Ժամը տասներկուքը անցեր էր: Ղազար Էֆէնտին ու տղան տուն դարձեր էին վերջին շոգենաւով եւ, դիմացի սենեակը նստած, առուտուրի վրայ կը խօսէին. տղան հօրը դէմ բարեւ բռնած էր գրեթէ, հնագանդ ու առաքինի գաւկի պարկեշտութեանը մէջ:

Այս ժամուն Գատըգիւղէն Պոլիս գալու շոգենաւ չկար: Չաճին պարտաւորուեցաւ, աղջիկը հետը առած, նաւակ մը վարձել Ղալաթիա անցնելու համար:

Աշունի իրիկուն մըն էր, ձմեռնամուտի մօտ: Անձրեւ մը կուգար միօրինակ եւ անընդհատ, սեւ քօղի մը մէջ պարփակելով ծովն ու ցամաքը: Նաւահանգիստին մէջ շոգենաւերը անշարժ հսկաներու պէս կեցեր էին իրենց խաչածեւ կայմերովը, կարծես թէ բարեւ բռնած: Ծովէն՝ Ղալաթիան, ու ակելի բարձրը՝ Բերան՝ իրենց անհամար լոյսերը կ'սկսէին մեկիկ մեկիկ վառել:

Ու սմբած՝ այս նաւակին մէջ, իր փոքրիկ պօղչան թելին տակ, Տիգրանուհիին, կամքէ ու գիտակցութենէ զուրկ, ուշադրութեամբ մտիկ կ'ընէր թիերուն ծովին մէջ մխրճուելու ձայնին, եւ հեռուն մութին մէջ վառուող բիծերը կը դիտէր, երբոր, առաջին անգամ, իր գաւկին խաղալը զգաց որովայնին մէջ:

Գիւղին մէջ Ղազար աղային տանը համար գայթակղութիւն մը չստեղծուեցաւ ասիկա. թէեւ ճշմարտութիւնը քիչ շատ իմացուեցաւ, բայց ամենքը ըսին որ Տիգրանուհին ծառաներէն մէկը գլխէ հանելուն համար վնասուած էր: Սուրբիկ հանըմին բարեպաշտութեանը վրայ այս առիթով ակելի շատ խօսուեցաւ. անոր տանը բարոյականին համբաւը քիչ մըն ալ ակեցաւ կարծես: Տղուն աղջիկ տալ ուզող կիները միաբերան գովեցին մայրն ալ, գաւակն ալ:

— Փօստային մէկն էր, կ'ըսէին սպասուհիին համար, ասանկ տան մը խըյմէթը չգիտցաւ:

Առուտուրի մէջ Ղազար աղային հետ գործ ունեցողներն ալ միեւնոյն կարծիքէն էին: Ղազար աղան, Սուրբիկ հանըմը կը մեղքնային, անոնց ի գործ դրած բարիքին դէմ եղած ասպերախտութեան վրայ կը զարմանային շարունակ:

— Աշխարհք է աս, կը կրկնէին գլուխին երերցնելով

Ե

Վրայէն չորս տարի անցեր էր, երբ այս պատմութիւնը իմացայ ես բարեկամ տունի մը մէջ ուր Տիգրանուհին կ'աշխատէր իբրեւ սպասուհի:

Միշտ աղուորիկ կին մըն էր, թէեւ տարիքին հակասող ծանրութիւն մը կար դէմքին վրայ:

Յուրթեան վերջին ամիսները, տղաբերքը Հաճի Տիւրիկին տանը մէջ եղեր անցեր էր, կայտառ, ինդուններես մանչ մը ձգելով իրեն, այն պահուն ուր անդին գեղին մէջ երիկը թոքատապէ կը մեռներ:

Մեծ ցաւ մը չէր զգացեր Տիգրանուհին այս չճանչցած երկանը մահէն. բայց նորէն թիկունք մը պակասած էր իրմէն այս մահով, որչափ ալ ենթադրական բան մը ըլլար ատիկա: Ու ակելի մեծ սիրով մը փարած էր այս գաւակին որ հայր չունենալուն համար կրկնապէս իրենն էր:

Ինքը աշխատելու ստիպուած ըլլալուն, իր գաւակը օտար կնոջ մը յանձնելու հարկադրուած էր, եւ օրին մէկը անոր ալ հիւանդանալուն լուրը բերին: Վազեց գնաց, բայց մանկիկին վերջին ժամուն միայն հասաւ. բժիշկ, դեղ օգուտ չըրին, ոչ ալ Ս. Մասունքը զոր Ամենափրկիչէն բերել տուաւ. թոչունի մը պէս առանց տրտունջի հոգին ականդեց անիկա իր գիրկին մէջ:

Տիգրանուհին մարդ մարդասանք չունէր. Հաճի Տիւրիկն ալ գեղն էր այդ միջոցին. ինքն իր գլխուն պարտաւորուեցաւ մեռելաթաղի բոլոր չնչին ու ահաւոր պատրաստութիւնները տեսնել: Ինքը հագուեցուց, սազեց մանկիկը, ինչպէս վերջէն կը պատմէր լալով: Յետոյ եկեղեցի գնաց փափաք յայտնելով որ կարելի եղածին չափ շքեղ ըլլայ յուղարկաւորութիւնը:

— Մեղք ես, կնի՛կ, ստակ չունիս, ըսին ժամէն:

Անիկա յամառեցաւ, ուզածնին վճարեց, շատ մը մոմեր վառել տուաւ, պնդեց որ երկու քահանայ գտնուի արարողութեանը. մանաւանդ չուզեց որ ճաղի մէջ դնեն իր

զաւակը, վախնալով որ հողին մէջ չմտնի անհիկա. սնտուկ ապսարեց, համոզուած ըլլալով որ անոր մէջ պիտի պատսպարուի պզտիկը:

Օր մը շարունակ ասոնցմով զբաղեցաւ, ամէն բան իր ձեռքովը կարգի դրաւ. ժամին մէջ ինքը միևնաջ եր եւ մինչեւ գերեզմանատուն, գլուխը բաց, ինքը միևնաջ հետեւեցաւ դագաղին: Հո՛ն, իր աչքին տակ, տեղաւորել տուաւ զայն հողին մէջ ու ետ դարձաւ իր ծառայած տունը, երկու օր բացակայ մնալէ ետքը:

Աչքերը ուռած էին լալէն, բայց զանգատի բառ մը չելաւ բերնէն. գլուխը կախած, առաջուան պէս աշխատութեան տուաւ ինքզինքը:

Անկէ վերջ իր բոլոր մտմտուքը, իր բոլոր առաջադրութիւնները այս պզտիկ հողակոյտին յատկացան: Ամսականէն ժողված առջի ստակովը՝ գերեզմանատան մէջ պզտիկ հող մը գնեց:

— Երկու հոգինոց հող մը, ըսաւ ցած ձայնով մը թաղականներուն:

Ստակը վճարեց եւ թուղթը ձեռքը բռնած իսկոյն գերեզմանատուն վազեց, զաւկին մարմինը հոն փոխադրել տալու համար: Քիչ ատեն վերջը, պզտիկ պատով մը շրջափակել տուաւ այդ պզտիկ հողը. վերջն ալ քար մը դնել տուաւ անոր վրայ: Բոլոր վաստկածը հող կը ծախսէր. ամէն ատեն նոր բան մը ունէր շինելիք, անելիք, գեղեցկացնելիք այդ տեղին մէջ:

Ու մեռելոցին օրերը, քանի հատ որ մեռելոցի օր կայ տարւոյն մէջ, մեծ ու պզտիկ, ցնծութեան օրեր էին իրեն համար: Առտուն կանուխ կ'ելլէր, իր այրի կնոջ արդուզարդը կ'ըներ, լուրջ ու հանդիսաւոր արդուզարդ մը, ու ճամբայ կ'իյնար դէպի գերեզմանատունը. պզտիկ տապանին քով չորած՝ երկար բարակ ու ցած ձայնով կը խօսէր իր զաւկին հետ, անոր մանուկի բարբառովը: Ամէն հեղուն տերտերին օրինել կուտար գերեզմանը, հարուստէ մը անելի առատածեռնութեամբ տալով օրհնողչէքը:

Դարձին՝ երանութիւն մը կար անոր դէմքին վրայ:

— Ու՛ր գացեր էիր, Տիգրանուհի՛, կը հարցնէին տնեցիները, իբրեւ թէ չգիտնային անոր ո՛ւր երթալը:

— Հանը՛մ, զաւկիս գացի, կը պատասխանէր ուրախութեամբ:

Բ

Չաբուղոն նշանուած էր. կը գարմանա՞ք:

Նշանտուլքը Պատրիարքարանի մեծ դահլիճը կատարուած չէր հարկաւ: Փոխանորդ Յայրը օրհնած չէր գայն, ոչ ալ լրագիրները ծանուցեր էին:

Պարգապէս, յաւիտեան իրար սիրելու խօսք տուած էին, գիշեր մը, ծառի մը տակ, աստղերը ունենալով իրենց վկայ. եւ աշխարհիս ամենէն մեծահանդէս նշանտուլքը եղած էր իրենցը:

Ամենքնիս կը ճանչնայինք Վասիլիկը, այն վտիտ դեմքով ու թնջուկ մազերով աղջիկը, որ գոյնզգոյն պատմուճաններով, արտակարգ արդուզարդերով՝ վերը, լեռը կուգար պտըտելու մինակը, շաբաթ իրիկունները:

Ոչ ոք կը համարձակէր այք նետել կամ դարպաս ընել անոր. Կեսարի խօսեցեալն էր անիկա. իր բացակայ նշանածին տարածած սարսափին մէջ պլլուած՝ աներկիւղ կը պտըտէր ամեն տեղ. ու զինքը պահպանող այս վախը կը վայլէր իրեն. անմատչելի ըլլալը՝ հրապուրիչ կ'ըներ զինքը: Մասամբ մըն ալ նշանածին փառքը իր վրայ կ'անդրադառնար. անոր արկածալից կեանքին կապուող այս աղջիկը սովորական մէկը չէր կրնար ըլլալ. աշխարհքէն դուրս ապրող մարդուն նշանածն ալ աշխարհքէն դուրս արարած մըն էր. ու տեսակ մը պատկառանքի խառնուած ըղձանքով մը կը նայէին իրեն, ամեն անգամ որ այս լուացարարի աղջիկը, վէս ու արհամարհոտ դիցուհիի ձեւերով, իր շաբաթական պտոյտը ընելու կուգար մեր կողմերը:

Վասիլիկ՝ ինքը գոհ կը թուէր այս կեանքէն. մարդ մը կար մութին մէջ որ զինքը կը պաշտէր, Ռիւ Պլասի ըսածին պէս, առանց երեւան ելլելու, առանց իր քովը գալու հրապարակաւ:

Ու մութը՝ իրական մութն էր հոս. կեանքը՝ գիշերը կ'սկսէր իրեն համար ու գիշերը կը վերջանար. վասն զի նշանածը մութին կրնար գալ, ամենէն անակնկալ մէկ պահուն, մտքէ չանցած ծպտումի մը տակ, որուն գրկաբաց կ'սպասէր:

Ուրիշներ կրնային ըսել որ «այսքան օր» ապրեցան. ինքը պիտի ըսէր «այսքան գիշեր»:

Լուսինին պէս խաւար պէտք էր որպէս զի փայլէր. Էապէս աղջամուղջի դշխոն էր այս աղջիկը:

Ու գողը, իր յարափոփոխ այլակերպութիւններովը, ամեն գիշեր նոր սիրահար մը կը թուէր իր այքին, եւ այսպէս ամեն հասակները ու ամեն գոյները կարգով կը ծնրադրէին իր առջեւ, դիւթական անուրջ մը շինելով ամեն ատեն:

Սկիզբները Վասիլիկ երջանիկ եղաւ այսպէս. Բաղդին չէ՞ր նմաներ քիչ մը այս անտեսանելի սիրահարը որ աշխարհքը կը կողոպտէր զինքը յափրացնելու համար ամեն ճոխութիւններով:

Օր մը սակայն այս ամենը ծաղրելի թուեցան իր աչքին: Իր գաղտագողի ու թաքուն երջանկութիւնը բան մը կը կորսնցներ այսպէս ծածուկ մնալով ու չկրնալով ուրիշներուն ցուցուիլ: Երեւակայեցէք մեծագին ադամանդ մը որ յաւիտեան տուփի մը մէջ փակուած մնալու դատապարտուած ըլլայ ու չկրնաք օր մը կուրծքերնուդ վրայ դնելով դիմացիննիդ շլացնել:

Իր բոլոր վայելքները, իր բոլոր ունեցածը այս գոցուած ադամանդին տպաւորութիւնը կը թողէին: Ինքը մանաւանդ, ցուցամոլ էակ, չէր կրնար գոհանալ կեանքի այն ներքին ու լռին ներդաշնակութեամբը որ ահա իր ձեռքին տակն էր եւ որ դուրսը արծագանգ չէր ձգեր. մարդիկ կան որ դերասաններ են աշխարհիս վրայ. իրենց սեփական կեանք ու գոյութիւն չունին եւ ուրիշներուն համար կ'ապրին միայն. հանդիսատեսներ պէտք է ասոնցպէսներուն, ու կեանքը հրապոյր չունի եթէ զիրենք դիտողներ պակսին. դերասաններ՝ որ յանձն չեն կրնար առնել թափուր սրահի մը առջեւ ներկայացում տալ:

Այսպէս էր Վասիլիկ. իր մեկուսացումը՝ լքում կը նշանակէր. ոչ ոք իր երեսը կը նայէր փողոց ելած ատեն. գեղին բոլոր երիտասարդները իր հրապոյրներէն կը դողային: Հիմա պչրանքի արուեստը կը փորձէր անոնց դէմ, թոյլ ու երերուն քալուածք մը առած էր որ նուրբ մարմինին ամեն խաղերը կը մատներ, եւ այսպէս ցանկութեան տաք հով մը կը տարածէր շուրջը ու օձի նայուածք մը՝ որուն հանդիպողը կը կախարդուէր:

Օր մը տղուն մէկը կապուեցաւ անոր ու հետը ամուսնանալ առաջարկեց. այն վայրկեանէն գողին սերը անտանելի լուծ մը դարձաւ իրեն: Այլ չկրցաւ սպասել անոր, գիշերները լուսցնել, ժամադրութիւններուն գտնուիլ, սա պարտեզին մէջ, կամ ան լերան վրայ. ամեն առթիւ գանգատեցաւ, բողբոջեց, ու լացաւ. միւսը կը զարմանար. ինչո՞ւ այս արցունքը, չէ՞ մի որ առաջուան պէս կը սիրէին իրար. ի՞նչ փոյթ մնացածը. Չաբուղոն իր առանձնացած կեանքովը, միամիտ մարդու յատուկ անծալք գաղափարները կը պարզէր:

— Ի՞նչ պիտի ըլլայ ասոր վերջը, կը հարցնէր աղջիկը:

Ասոր վե՛րջը. Չաբուղոն երբեք չէր խորհած ասոր. ընդհակառակը կը փափագէր որ վերջը չգայ:

Այն ատեն յուսահատած՝ յօժարութեամբ բաժանում ձեռք բերելէ այս նշանտուքէն, որ օրհնուած պսակէ աւելի ամուր ու հաստատ կ'երեւար, դիւային խորհուրդ մը անցաւ մտքէն. գիշեր մը ոստիկանները կանչեց ու ձերբակալել տուաւ Չաբուղոնը:

Քարաշեն պատերուն, երկաթե ամրափակ դուռներուն ետին կը սլքտկան, սպասելէ վիատած, կամքի պարտասումի մը մէջ անզգա և անտարբեր դառնալով տարիներու անվերջ հոլովումին:

Անակնկալ փրկութեան մը հույսը, առջի օրերուն ակնկալութիւնը, շատոնց լքած է զիրենք և հիմակ նախասահմանյալ թվականին սպասելով միայն, կծկված կը մսան այդ տեղ ժամերով, չորս դիէն բարձրացող պարիսպներուն տակ բուսած հսկա

տունկերու նման: Ամեն հասակները ու ամեն տարիքները կան հոս, այս դիմացկուն քարե արգանդին մեջ որ Թիարան կը կոչվի և որ այս մարդիկը պիտի վերածնի օր մը, պիտի արտաքսե իր ծոցեն դուրս, համերամ հղացումներով:

Վերեն, նեղ բացվածքներե լույսը կը սպրդի ներս, հաշվված խնայված լույս մը, տկար ու տժգույն բան մը, այն դեմքերուն պես զորս լուսավորելու կու գա:

Չարուդոն ասոնց մեջն է. իր համբավը կանխած է զինքը բանտին մեջ. մեծ չարագործ մը չէ բայց մեծ ճարպիկ մըն է. հսկողության տակ է շարունակ այս բանտարկյալը որ ոտքը երկաթներ ունի ամուր ու կռակը հաստ պարիսպներ:

Յոթը տարի պիտի մնա այսպես. երիտասարդ էր հոս եկած ատեն ու ծերացած դուրս պիտի ելլե. իր նշանածին կը խորհի ամեն ատեն, այն մեկհատիկ բարեկամության որուն աներկբա կը հավտա դեռ. ո՞ր է. ի՞նչ կ'ընե արդյոք. ու հակառակ ամեն զգուշության, փախչելու ջանքեր կ'ընե. անգամ մը երեսուն կանգուն բարձրությամբ պատե մը կ'անցնի, բայց դուրսի բակին մեջ կը բռնվի. ուրիշ անգամ մը բանտին երդիքին վրա ելլելու կը հաջողի. երկու գիշեր կ'անցընե հոն. կե տեսնեն ու կը բռնեն զինքը նորեն: Այն ատեն ամեն խստությունները ի գործ կը դնեն ամես վայրկյան փախչելու հետամուտ այս մարդուն դեմ. բանտին կարգապահական պատիժները կը տեղան իր գլխուն. բան մը չի կասեցներ զինքը. դուրս պիտի ելլե Վասիլիկը գտնելու համար. իրավ որ ուրիշ պատճառ մը չունի փախչելու:

Եվ գիշեր մը կը հաջողի վերջապես. խոհանոց'ին ծխնելույզին մեջեն վեր կ'ելլե նախ ու հետո հիանալի ճարտարությամբ մը այդ ցից բարձրութենեն վար կ'իջնե, այս անգամ բանտին շրջափակեն դուրս:

Երեք տարվան մեջ այս վեցերորդ փորձը կը հաջողի ահա, ու շիտակ, անխոհեմությամբ թերևս, մեր գեղը կը դառնա նորեն. կասկած մը չանցնի որ այս հնարամիտ մարդուն մտքեն. տարակույս մը չի գար, թունավորելու իր սիրույն մաքրությունը: Իր ձերբակալությունը. ձախող դիպված մը միայն. առջի օրերուն պես գիտե որ սպասող մը կա իրեն ամենեն անակնկալ ժամուն. ու վայելած ազատության գինը՝ այս բերկրանքով կը բազմապատկվի, կը մեծնա, իր սրտեն դուրս պոռթկալու չափ: Վասիլիկին թովիչ ակնարկը պիտի գտնե նորեն. անոր գոռզ մագերուն պատկերը դեռ չտեսած, աչքին առջևեն կ'անցնի, և ուրախության սարսուռ մը կը ցնցե իր հեք մարմինը:

Մեղմիվ կը մոտենա անոր տունին. պատուհանին առջև խոսացկության ձայն մը կեցնե զինքը. ո՞վ է ներսը. մտիկ կ'ընե, չի հավատար իր լսածին. ներս կը մտնե անձայն, առանց իր ներկայությանը կասկածը տալու, ու չի հավատար իր տեսածին. ժամ մը ամբողջ անկյուն մը կծկված կը սպասե, չկրնալով ցրված միտքը ամփոփել. հետո տակավ ինքզինքը կը գտնե, կը խորհի ու ձեռքը ակամա կ'երթա պզտիկ դանակի մը կորթին զոր մեջքի գոտիին անցուցած է. մատները կը շոյեն զենքը. առջի հեղն է որ արյուն թափելու հարկը կը տեսնե որոշ ու հստակ. ինքը որ ամեն բանե կրնա փախչի, այս վրեժխնդրության գաղափարեն չի կրնար գատվիլ ահա: Ո՞վ է այդ ապուշ Էակը որ իր թողած պակասը լեցնելու եկած է այստեղ, սա նստող տղո՞ւն համար Վասիլիկ մոռցած է զինքը: Մեկ նայվածքով կը չափե, կը գնահատե այս ոտիսը ու շատ վար կը գտնե իրմե:

Եվ իր սիրտը լեցնող արհամարհանքին առջև վրեժի գաղափարը կը թուլնա. ձեռքը կը քաշե դանակին բունեն զոր իր արկված մատները կիսովին դուրս քաշած էին մեջքի գոտին. ո՛չ, չեն արժեր ասոնք իր գայրույթը, ու կամացուկ դուրս կ'ելլե կրկին: Բոլոր գիշերը կը քալե թափառական, փողոցներուն մեջ. ո՛ւր պիտի երթա այսպես. տուն չունի, ծանոթ չունի: Կը խորհի որ այդքան ծանրագևի ձեռք անցուցած ազատությունը բանի մը չի ծառայեր և ուսերուն վրա կը ծանրանա:

Արշալույսին հետ՝ վարանոտ քայլերով ետ կը դառնա, իր բանտին նորեն, որուն դրան առջև կը գտնեն զինքը առտուն ու ներս կ'առնեն:



Constantinople: Escaliers de Yüksek Kaldırım, 1884–1900, photographer unknown. Pierre de Gigord Collection of Photographs of the Ottoman Empire and the Republic of Turkey. Digital image courtesy of the Getty's Open Content Program